ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-7-Ը ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
Ադրբեջանի Հանրապետություն (ք. Բաքու), 2019թ. դեկտեմբերի 4-ից 7-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցքի (ՏՐԱՍԵԿԱ) Միջկառավարական հանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
Մասնակցություն Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցքի (ՏՐԱՍԵԿԱ) Միջկառավարական հանձնաժողովի 14-րդ նստաշրջանին և կառույցի 20-ամյակին նվիրված միջոցառումներին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Ս.թ. դեկտեմբերի 5-6-ը Բաքու քաղաքում կայացավ Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցքի (ՏՐԱՍԵԿԱ) Միջկառավարական հանձնաժողովի 14-րդ նստաշրջանը և կառույցի 20-ամյակին նվիրված միջոցառումները, որին ՀՀ պատվիրակությունը մասնակցում էր հետևյալ կազմով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանը, նույն նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության վարչության տեխնիկական քաղաքականության բաժնի պետ Արման Կարապետյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի և իրավունքի բազմակողմ քաղաքականության ու զարգացման համագործակցության վարչության խորհրդական Արտեմ Ազնաուրյանը:
Մասնակցում էին նաև անդամ երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության, Վրաստանի, Բուլղարիայի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Թուրքիայի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության, Տաջիկստանի, Ուկրաինայի և Ուզբեկստանի Հանրապետության պատվիրակությունները և միջազգային այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:
Անդամ երկրների պատվիրակությունները՝ այդ թվում ՀՀ պատվիրակությունը, ներկայացրեցին տրանսպորտի ոլորտի վերջին տարիների ձեռքբերումները, առկա խնդիրները և միջանցքի արդյունավետության բարձրացմանը ուղղված առաջարկներ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
Քննարկվեցին.

- Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցքի զարգացմանն ուղղված 2016-2026թթ. Ռազմավարության 2018-2021թթ. ծրագրի կատարման ընթացքը

- «Տրասեկա սահմանների անցման մասին» ուղեցույցին համաձայնություն տալու հարցը

- Անդամ երկրների կողմից ծովագնացության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների կատարման ընթացքը
- «Տրասեկա» բեռնափոխադրումների թույլտվությունների համակարգի կիրառման 2018թ. արդյունքները, ինչպես նաև համակարգին Իրանի Իսլամական Հանրապետության միանալու հարցը
- 2009թ. Չոլպոն-Աթայի «Մուլտիմոդալ փոխադրումների զարգացման մասին» Համաձայնագրին անդամակցելու հարցը
- Ֆինանսավորման և կազմակերպչական այլ հարցեր:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայկական պատվիրակությունը բոլոր քննարկումներին հանդես եկավ կառուցողական առաջարկներով և իր համաձայնությունը հայտնեց հայկական կողմին աուդիտի անցկացման խմբի աշխատանքներին ներգրավելուն:

Միաժամանակ հանդես եկանք խոսքով՝ համակարգման աշխատանքները դարձնել առավել թափանցիկ և արդյունավետ, ինչպես նաև չքաղաքականացնել հանդիպումների օրակարգերը, հաշվի առնելով այն փաստը, որ նախատեսված էր այց Շահիդների ծառուղի, ինչին մանակցությունը մեր պատվիրակաությունը նախապես մերժել էր: Մերժվել էր նաև հրավերը՝ մասնակցելու Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից կազմակերպված ընթրիքին:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վերջին օրը տեղի ունեցավ նաև գլխավոր քարտուղարի ընտրությունը: Քարտուղարությունը այսուհետ կգլխավորի Ղազախստանի Հանրապետության ներկայացուցիչը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.

10 դեկտեմբերի 2019թ.